Իններորդ հաղորդում

Սյուներ և լուսատուներ

Գրվածքների ընթերցում. Հյտ 3:7-13, Փլպ 2:12-16

I. Որպեսզի Եռամեկ Աստծու մեջ եղող սյուներ դառնանք, պետք է ընթանանք Աստծու՝ եկեղեցու համար նախասահմանած ճանապարհով՝ Փիլադելփիայի ճանապարհով. միայն վերականգնված եկեղեցին, որը խորհրդապատկերված է Փիլադելփիայում եղող եկեղեցով, կարող է իրագործել Աստծու հավիտենական մտահղացումը և բավարարել Աստծու սրտի ցանկությունը՝ Հյտ 3:7-13, հմմտ 21:22.

Ա. Փիլադելփիայում եղող հաղթող սրբերը սյուներ են, որոնք գիտեն ներկա ճշմարտությունը, պահում են ճշմարտության բացարձակությունը և կազմվում են ճշմարտությամբ եկեղեցու՝ որպես ճշմարտության սյան ու հենարանի համար՝ Բ Պտ 1:12, Ա Տմթ 3:15-16:

Բ. Փիլադելփիայում եղող հաղթող սրբերն ամուր բռնում են այն, ինչ ունեն, իսկ այն, ինչ նրանք ունեն, «այս սպասավորությունն» է՝ եզակի նորկտակարանյան սպասավորությունը. փաստացի՝ Տիրոջ վերականգնումը մեզ վերադարձնել է Նոր Կտակարանի եզակի սպասավորությանը՝ Հյտ 3:11, Բ Կրթ 4:1.

1. Հոգու սպասավորությունը նոր ուխտի սպասավորությունն է, որի նպատակը մեզ աստվածացնելն է՝ մեր սրտերի վրա ինչ-որ բան ներգրելով կենդանի Աստծու Հոգով՝ որպես աստվածային և առեղծվածային «թանաքով»՝ մեզ դարձնելով Քրիստոսի կենդանի նամակները. սա աստվածային հայտնության գագաթնակետն է՝ 3:3, 6, 8, 18, 4:1, հմմտ Հյտ 2:7բ, 22:17ա:
2. Արդարության սպասավորությունը Քրիստոսի սպասավորությունն է որպես Նրա, ով մեր օբյեկտիվ արդարությունն է՝ մեր արդարացման համար, և մեր սուբյեկտիվ արդարությունն է, որ «ասեղնագործվում է» մեր մեջ Հոգու փոխակերպող աշխատանքի շնորհիվ՝ Քրիստոսին մեր կյանքով դրսևորելու և Քրիստոսի իսկական արտահայտության համար Աստծու օրգանական փրկության մեջ. սա աստվածամարդկային ապրելակերպն է՝ Բ Կրթ 3:9, Սղմ 45:1, 13-14, Հռմ 5:10:
3. Հաշտեցման սպասավորությունն աշխարհը Քրիստոսի հետ հաշտեցնելու սպասավորությունն է մեղքերի ներման միջոցով՝ նրանց իրավական փրկագնման համար, և հավատացյալներին Քրիստոսի հետ հաշտեցնելու սպասավորությունը, որպեսզի նրանք լինեն մարդիկ, որոնք ապրում են հոգում՝ Սրբությունների Սրբությունում, իրենց օրգանական փրկության համար. սա մարդկանց հովվելն է Աստծու համաձայն՝ Բ Կրթ 5:18-21, Ա Պտ 5:1-4:
4. Որպես սյուն կատարելագործվելու ճանապարհն այս սպասավորությունն ամուր բռնելն է՝ խնջույք անելով Աստծու տնտեսության դրա-

կան բովանդակությամբ, մնալով Տիրոջ շարժման ներկա հոսքի մեջ Նրա գլխավորության ներքո և զգուշանալով մահից ու բաժանությունից՝ Բ Տմթ 3:10, Ա Տմթ 4:15, Հռմ 8:6, 16:17, Ա Հվի 2:18-20, Ա Կրթ 11:19, Թվց 16:3, 7:

Գ. Փիլադելֆիայում եղող հաղթողների բնորոշ գիծն այն է, որ նրանք հասնում են Աստծու տնտեսության աստվածային հայտնության գագաթնակետին.

1. Ասիայում եղող եկեղեցիներից մեկը տարբեր էր մյուսներից և արժանացավ Տիրոջ բարձր գնահատականին. դա Փիլադելֆիայում եղող եկեղեցին էր. Տերը բարձր գնահատեց նրանց, քանի որ նրանք պահում էին Նրա խոսքը, այսինքն՝ նրանք չէին շրջվել առաքյալների ուսմունքի խոսքից՝ Աստծու տնտեսության մասին առողջ ուսմունքից, աստվածային հայտնության գագաթնակետից՝ Հյտ 3:8, Բ Տմթ 3:16-17, Ա Տմթ 1:3-4:
2. Այն, որ հաղթողները տաճարում սյուներ են լինելու, նշանակում է, որ նրանք սյուներ են լինելու Եռամեկ Աստծու մեջ, քանի որ տաճարը «Տեր Աստված Ամենակարողն է և Գառը». Աստված ներկառուցվում է նրանց մեջ, որպեսզի նրանց դարձնի կենդանի և թանկագին քարեր, իսկ նրանք ներկառուցվում են Աստծու մեջ, որպեսզի Աստծու մեջ քարե սյուներ դարձվեն՝ Աստծու հետ ընդհանրականություն կազմելու համար՝ որպես Աստծու և մարդու փոխադարձ բնակատեղը՝ Հյտ 3:12ա, 21:22, 3, Սղմ 90:1, Հվի 14:23, հմմտ Գ Թգ 7:15-22:
3. Այն, որ Աստծու անունը, Նոր Երուսաղեմի անունը և Տիրոջ անունը գրված են հաղթողների վրա, նշանակում է, որ հաղթողների մեջ է ներդրվել այն ամենը, ինչ Աստված է, Նոր Երուսաղեմի բնությունը և Տիրոջը անձը, այնպես որ նրանք նշված են Եռամեկ Աստծով և դարձվել են Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ Հյտ 3:12բ, 22:4բ:

Դ. Փիլադելֆիայում եղող հաղթողների բնորոշ գիծը նրանց աստվածամարդկային ապրելակերպն է, որը Քրիստոսի հարստությունը վայելելու միջոցով է իրագործվում՝ 3:7, Եսյ 22:15, 20-24.

1. Փիլադելֆիայում եղող հաղթողները մի քիչ զորություն ունեն. սա ցույց է տալիս, որ Տիրոջը հաճելի է ոչ թե այն, որ Նրա համար շատ բաներ անենք, այլ, որ Նրա համար անենք այնքան, որքան կարող ենք, այն բանով, ինչ ունենք՝ Հյտ 3:8, Բ Կրթ 12:7-10, Մրկ 14:8:
2. Փիլադելֆիայում եղող հաղթողները պահում ու սիրում են Տիրոջ խոսքը, որը նրանց համար «ոսկու ու արծաթի հազարավոր կտորներից ավելի լավ է» (Հյտ 3:8, Սղմ 119:72, 140). նրանք աստվածաշունչ Գրվածքն ընդունում են ամեն աղոթքի միջոցով, որպեսզի Աստծու շնչառությունն ունեցող Աստծու մարդիկ լինեն, ինչպես նաև Աստծու տնտեսության մասին առողջ ուսմունքի մեջ մնալու միջոցով (Եփս 6:17-18, Բ Տմթ 3:14-17, հմմտ Ա Տմթ 6:3-4):

3. Փիլադելփիայում եղող հաղթողները Տիրոջ անունը չեն ուրանում (Հյտ 3:8). նրանք հրաժարվում են Տեր Հիսուս Քրիստոսի անունից զատ մնացած բոլոր անուններից, և նրանք կանչում են Տիրոջ անունը, որպեսզի ստանան Նրա հարստությունը (Հռմ 10:9-10, 12-13)՝ բացահայտորեն դավանելով, որ Հիսուս Քրիստոսը Տեր է՝ ի փառս Հայր Աստծու (Փլպ 2:11):

Ե. Փիլադելփիայում եղող հաղթողների բնորոշ գիծը նրանց եղբայրասիրությունն է. սերը գերակշռում է նրանց միջավայրում, այնպես որ նրանք հովվում են մարդկանց Աստծու համաձայն, այսինքն՝ իրենց Հայր Աստծու սիրող ու ներող սրտի և իրենց Փրկիչ Քրիստոսի հովվող ու փնտրող հոգու համաձայն.

1. Տիրոջ վերականգնումը Տեր Հիսուսին սիրելու վերականգնումն է. Փիլադելփիայում եղող հաղթողները կանգնած են միասնության իսկական հողի վրա և իրենց պահում են Աստծու սիրո մեջ, որպեսզի սիրեն Տիրոջը և սիրեն բոլոր եղբայրներին՝ Հդ 20-21, Բ Կրթ 5:14, Հվի 12:3, Ղկս 7:47, Ա Հվի 3:14-16, հմմտ Սղմ 133:
2. Եկեղեցում առաջինը լինել սիրելը հակառակ է այն բանին, որ ունենք Տիրոջը՝ որպես մեր առաջին սիրո՝ Նրան տալով առաջին տեղն ամեն բանում՝ Գ Հվի 9, Կոս 1:18բ:
3. Կենսական խմբերում սերը պետք է գերակշռի. Աստված առաջինը մեզ սիրեց. Նա մեր մեջ ներարկեց Իր սերն ու մեր ներսում ծնունդ տվեց այն սիրուն, որով մենք սիրում ենք Նրան ու սիրում ենք եղբայրներին՝ Ա Կրթ 12:31բ, 13:4-8, 13, Ա Հվի 3:14:

Զ. Փիլադելփիայի ճանապարհն Աստծու հավիտենական տնտեսության ճանապարհն է՝ բացահայտված 23-րդ Սաղմոսում, որը Քրիստոսի՝ եկեղեցին Իր երկնային սպասավորության մեջ հովվելն է՝ Իրեն Իր Աստվածային Երրորդության մեջ մեր էության մեջ բաշխելով, որպեսզի Աստվածամարդու կյանքով ապրենք աստվածային հայտնության գագաթնակետին հասնելու նպատակով:

II. Խավար և ապականված աշխարհում մեր գործառույթը որպես լուսատուներ շողալն է՝ կյանքի խոսքն առաջարկելով՝ Փլպ 2:12-16.

Ա. Քրիստոսն արևն է, իսկ եկեղեցին՝ որպես լուսինը, և հավատացյալները՝ որպես մոլորակները, արտացոլում են Նրան՝ կյանքի խոսքն առաջարկելով. կյանքի խոսքն առաջարկել նշանակում է այն «կիրառել» աշխարհի հանդեպ, ներկայացնել ու մատուցել աշխարհին՝ Քրիստոսին սեփական կյանքով դրսևորելով՝ Գրծ 5:20:

Բ. Աստված, ով գործում է մեր մեջ (Փլպ 2:13), մատակարարող Հոգին է (1:19), հարության զորությունը (3:10) և զորացնող Քրիստոսը (4:13). ինչպես լուսատուներ շողալը (2:15) Քրիստոսին մեծարելն է (1:20), իսկ կյանքի խոսքն առաջարկելը՝ (2:16) Քրիստոսին ապրելը (1:21ա):

Գ. Մենք պետք է ձգտենք ճանաչելու Քրիստոսին՝ որպես հարության զորության, մեր մեջ գործող Աստծու՝ Նրա, ով զորացնում է մեզ, որպեսզի

շողանք որպես լուսատուներ աշխարհում Նրա մեծարման համար՝ 3:10, 2:13, 4:13, 1:20:

Դ. Զորությունը, որը Պետրոսին ֆիզիկապես ազատեց բանտից, Աստծու զորություննէր, բայց զորությունը, որը Պողոսը փորձառաբար ապրում էր՝ մնալով բանտում, հարության զորություննէր՝ Գրծ 5:18-20, Փլպ 1:19, 3:10.

1. Աստծու նորկտակարանյան տնտեսության մեջ Աստծու մտադրությունը ոչ թե արտաքին հրաշքն է, այլ ներքին հրաշքը. ներքին հրաշքն այն է, որ Քրիստոսը՝ որպես Հոգին, ներդրվում է մեր մեջ, որպեսզի լինի մեր փրկությունը՝ մեզ ներքուստ սատարելով, մեզ ամրապնդելով ու մեզ զորացնելով մեր տկարության մեջ, որպեսզի ճառագենք Քրիստոսին՝ Բ Կրթ 12:7-10:
2. Զորացնող Քրիստոսը Քրիստոսին ճառագելու գաղտնիքն է ցանկացած միջավայրում և ցանկացած հանգամանքներում Նրան արտահայտելու համար, իսկ այդ գաղտնիքի գաղտնիքը Հիսուս Քրիստոսի համաբովանդակ Հոգին է մեր հոգում՝ որպես մեր ամենօրյա և ամեն պահի փրկությունը՝ Փլպ 1:19, 4:23:

Ե. Տրտունջներն էլ, դատողություններն էլ մեզ խանգարում են փորձառաբար ապրելու ու վայելելու Քրիստոսին, այնպես որ Նա կարողանար Իր փառքի համար շողալ մեր մեջ ու մեր միջոցով՝ 2:14.

1. Տրտունջները դժգոհ և ծածուկ փնթփնթոցներն ու քրթմնջյուններն են, այդ թվում՝ նկատողությունները, ծածուկ խոսքակռիվները, դժգոհություններն ու բողոքները. «ոչ էլ տրտնջացեք, ճիշտ ինչպես նրանցից ոմանք տրտնջացին և ոչնչացնողի կողմից կործանվեցին»՝ Ա Կրթ 10:10:
2. Դատողությունները վիճաբանություններն ու քննարկումներն են, որոնք կասկածամտության կամ անվստահության երանգ են կրում. դատողությունները ներառում են վեճեր ու կասկածներ և ակնարկներ, ինչպես նաև որոշակի հետևություններ ու եզրահանգումներ՝ հմմտ Ա Տմթ 1:3-6, 6:3-4, Բ Կրթ 11:2-3:
3. Ապստամբ ու հայհոյական խոսքերը բխում են դատողություններից ու փաստարկներից. Տիրոջ ծառան պետք է ազատվի դատողություններից՝ լուսավորված լինելով Տիրոջ կողմից, որպեսզի լինի «երանելի կուրության» վիճակում, այնպես որ ապրի Քրիստոսի գլխավորության ներքո կյանքի ոլորտում և լույսի իշխանության ներքո, այլ ոչ թե ճշտի ու սխալի ոլորտում խավարի իշխանության ներքո՝ Գրծ 22:10, Կող 1:12-13, Հռմ 9:20-21, 11:34, հմմտ Գրծ 16:25:
4. Մարդու ապստամբությունը դրսևորվում է խոսքերի, մտքերի ու փաստարկների տեսքով. մտքերն ու փաստարկները Սատանայի՝ Աստծու հակառակորդի ամրություններն են Աստծուն չհնազանդվողների մտքում. հոգևոր պատերազմի միջոցով դատողություններն ու

փաստարկները պետք է խորտակվեն, ու ամեն միտք պետք է Քրիստոսի գերին դարձվի և Նրան հնազանդեցվի՝ Բ Կրք 10:3-5:

5. Ամեն անգամ, երբ Տերը Ղևտացվոց գրքի 18–22-րդ գլուխներում Իր ժողովրդին ինչ-որ բան էր պատվիրում անել, Նա պատվերների միջև զետեղում էր «Ես Եհովան եմ» բառերը. այնտեղ չկա անգամ «որովհետև» բառը. «Ես Եհովան եմ» բառերը միակ փաստարկն են:

Զ. Որպեսզի փրկվենք տրտունջներից ու դատողություններից՝ Քրիստոսին ապրելու և Քրիստոսին որպես լուսատուներ ճառագելու համար, պետք է մնանք Նրա՝ որպես մեր ներքին մղող ուժի հետ հպման մեջ՝ վայելելով Նրան՝ որպես կյանքի խոսքի, մնալով Նրա հետ հաղորդակցության մեջ աղոթքում և ապրելով ցնծացող, գոհացող և գովաբանող կյանքով մեր սքանչելի հոգում Եռամեկ Աստծու՝ որպես հրաշալի Հոգու միջոցով Քրիստոսի փառավոր Մարմնի համար՝ Փլպ 1:19, 2:13, 3:10, 4:13, 2:15, 4:6, Ա Թսղ 5:16-20:

© 2026 Living Stream Ministry